

ԸՆԿ. Ղ. ԴԱԼԼԱՔՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Ընկեր Ստալինի՝ լեզվաբանության վերաբերյալ հանճարեղ աշխատությունների հիման վրա ծայր աստիճան կարևոր է մշակել ազգային լեզուների զարգացման տեսական ու գործնական հարցերը, վերացնել այն խառնաշփոթությունը, որը լեզվի «նոր ուսմունքի» կողմնակիցները մտցրել են լեզվաշինարարության հարցերի մեջ: Այս տեսակետից մեծ նշանակություն ունի Գիտությունների ակադեմիայի Լեզվի ինստիտուտի կողմից հրավիրված ներկա նիստը, նվիրված հայոց լեզվի մաքրության և ժամանակակից հայերենի լեզվաշինարարության հարցերին:

Պրոֆեսոր Լավանցյանը իր ընդարձակ զեկուցման մեջ պիտականորեն հիմնավորեց—զրաբարի առաջացման, հայոց լեզվի ծագման ու զարգացման հարցերը, նա առաջ քաշեց մեր համաժողովրդական լեզվի հետագա հարստացման մի քանի պրոբլեմներ, որոնք առանձնապես մեծ կարևորություն են ստանում լեզվաշինարարության ներկա էտապում, որովհետև մեր ժողովրդի լեզուն թե քերականական և թե բառային ֆոնդի տեսակետից կազմավորված լինելով հանդերձ, այժմ էլ ավելի մեծ թափով է զարգանում, կատարելագործվում և հարստանում:

Որպեսզի մեր լեզվի զարգացումը ընթանա ճիշտ, մտածված, և մեր կուլտուրայի սոցիալիստական բովանդակությանն ու ազգային ձևին համապատասխան, անհրաժեշտ է, որպեսզի լեզվաբանները, զրոգները, մամուլի, ուղիների, կինոյի աշխատողները և առհասարակ լեզվի հետ առնչություն ունեցողները քրտնաջան աշխատանք կատարեն:

Գրաբարի հիմնականում զրավոր լեզու լինելու մասին, մանավանդ նրա մահացման շրջանում, երկու կարծիք լինել չի կարող. այդ մասին պրոֆեսոր Լավանցյանն էլ նշեց իր զեկուցման մեջ:

Խոսելով պրոֆեսոր Սանժեյեվի հոգվածի մասին, պրոֆեսոր Զիքորավան ասում է.—«Հոգվածում բերված են հետաքրքրություն ներկայացնող ավյալներ պրական լեզուների մասին, որոնք Գ. Բ. Սանժեյեվի արտահայտությամբ, ընդհանուր, բայց խորթ են մի շարք ժողովուրդների համար (այդպիսիք են—լատիներենը միջնադարյան Եվրոպայի համար, արարենները Մերձավոր Արևելքի համար որոշ դարաշրջաններում): Սակայն իմ կարծիքով, ավելի նպատակահարմար կլինեք այդպիսի լեզուները անվանել զրականության պաշտոնական լեզուներ—այդ լեզուների համար բնորոշ է հատկապես այն, որ նրանք ընդհանուր չեն դարձել, որ նրանք չեն կարող ժողովրդական դառնալ» («Պրավդա» 1951 թ. ապրիլի 9-ը): Մեր կարծիքով պրաբարը հենց այդպիսի պաշտոնական լեզու է դարձել այն տարրերով յամբ, որ Հայաստանի կենտրոնական մասում գերիշխող ցեղախմբի համար դարձել է որպես խոսակցական լեզու և չի հասել համաժողովրդական լեզվի մակարդակին:

Բայց ես համաձայն չեմ պրոֆեսոր Լավանցյանի այն դրույթի հետ, որ պրաբարի անհետացումը՝ եղել է միայն որպես երկրի զրավման և պետականության վերացման արդյունք: Այդ նույն կարծիքին է նաև ընկեր Ս. Դադարյանը: Միայն այդ՝ այսինքն պետականության վերացումը, լեզվի վերացման համար պատճառ լինել չի կարող: Եթե ընդունենք, որ զրաբարը

չի եղել համաժողովրդական, խոսակցական լեզու, այլ եղել է կենտրոնական հայ պետականության լեզու, այդ դեպքում համոզիչ կլինի այդ հետևությունը: Իսկ եթե ընդունենք, որ զրաբարը եղել է համաժողովրդական ձևավորված լեզու իր քերականական կառուցվածքով և բառային հիմնական ֆոնդով, ապա այդպիսի լեզուն խորտակել բոնի ասիմիլացիայի միջոցով հնարավոր չէ, և բացատրել միայն այդ պատճառով, ճիշտ չէ:

Ընկեր Ստալինը միանգամայն պարզ կերպով նշում է, որ «Հարյուրավոր տարիներ թյուրքական ասիմիլատորները ջանք էին թափում ազնա տեղու, խորտակելու և ոչնչացնելու բալկանյան ժողովուրդների լեզուները: Այդ ժամանակամիջոցի ընթացքում բալկանյան լեզուների բառային կազմը ենթարկվեց լուրջ փոփոխությունների, յուրացվեցին ոչ-թիչ թյուրքական բառեր ու արտահայտություններ, եղան նաև «մերձնցումներ» և «հեռացումներ», սակայն բալկանյան լեզուները դիմացան և ապրեցին: Ինչու: Որովհետև այդ լեզուների քերականական կառուցվածքը և բառային հիմնական ֆոնդը հիմնականում պահպանվեցին»¹:

Իմ կարծիքով վերոհիշյալից պետք է հանգել այն եզրակացության, որ գրաբարը չի կարողացել դառնալ իսկական լիարժեք համաժողովրդական լեզու իր բոլոր հատկություններով, նա հիմնականում դարձել է միայն գրավոր լեզու և Զ-րդ դարից հետո արդեն դարձավ միայն հոգևորականության համար գործածելի գրավոր լեզու: Նա չի ծառայել իբրև հաղորդակցման միջոց՝ ամբողջ ժողովրդի համար և այդպիսով իրեն դատապարտել է անհետացման: Իսկ պետականության վերացումը նպաստել է այդ անհետացմանը, այլ ոչ թե հիմնական պատճառն է եղել: Ահա թե ինչ է ասում ընկեր Ստալինը այդպիսի լեզուների մասին.

«Լեզուն հենց նրա համար էլ գոյություն ունի, հենց նրա համար էլ ստեղծված է, որպեսզի ծառայի հասարակությանը՝ իբրև ամբողջության, որպես մարդկանց հաղորդակցման գործիք, որպեսզի ընդհանուր լինի հասարակության անդամների համար և միասնական՝ հասարակության համար, որպեսզի հավաքարապես սպասարկի հասարակության անդամներին, անկախ նրանց դասակարգային դրությունից, Բավական է, որ լեզուն շեղվի այդ համաժողովրդական դիրքից, բավական է, որ լեզուն կանգնի որևէ սոցիալական խմբի գերադասման ու աջակցման դիրքի վրա՝ ի վնաս հասարակության մյուս սոցիալական խմբերի, որպեսզի նա կորցնի իր որակը... հետադիմի և իրեն դատապարտի անհետացման»²:

Իսկ մենք պատմությունից գիտենք, որ գրաբարը արդեն հասած է եղել իր վերացման աստիճանին, չդառնալով համաժողովրդական լեզու և հայ պետականության վերացումը միայն արագացրել է այդ փուստը:

Ինչ վերաբերում է նոր, ազգային, համաժողովրդական լեզվի կազմավորման մասին պրոֆեսոր Ավանյանի կողմից պաշտպանվող այն կարծիքին, որ այդ լեզվի հիմքը արարատյան դաշտավայրի բարբառն է, միանգամայն ճիշտ է: Մեր լեզվաբանները պետք է պաշտպանեն այդ կարծիքը:

¹ Ի. Վ. Ստալին, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, էջ 38:

² Նույն տեղում, էջ 17:

խորացնեն և զարգացնեն իրենց հետագա պատահետադոտական աշխատանքում:

Խոսելով պատմական այն ճակատագրի մասին, որին ենթարկվում են տեղական բարբառները ազգային լեզուներ կազմավորվելու ժամանակաշրջանում, ընկեր Ստալինը պարզաբանում է, որ բարբառներից մեկը դառնում է ազգային լեզվի հիմքը, իսկ ֆնացած բարբառները կորցնում են իրենց ինքնատիպությունը, ձուլվում են միասնական ազգային լեզվի մեջ և անհետանում: Հենց այդպես էլ հիմնավորում է պրոֆեսոր Ղափանցյանը իր այդ միտքը ազգային լեզվի հիմքը դարձող բարբառի վերաբերյալ և կանգ է առնում արարատյան բարբառի վրա:

Այժմ ես անցնում եմ մի ուրիշ հարցի, մի շարք բառերի փոխառման հարցին, հիմնականում առարկելով ընկ. ընկ. էդ. Սղայանին և Գ. Սևակին:

Ընկեր Ստալինի աշխատությունից մենք կզրականցնում ենք, որ սովետական ժողովուրդների լեզուները, այդ թվում և հայոց լեզուն, հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեոլուցիայից հետո ի վիճակի եղան առանց արմատական փոփոխությունների, սպասարկելու նոր սոցիալիստական հասարակակարգի պահանջները: Միանգամայն օրինական է, որ ռեոլուցիայի տարիներին տեղի ունեցավ բառային կազմի լրացում այնպիսի նոր բառերով, որոնք արտացոլում են նոր հասարակական երևույթներ և արտահայտում են նոր զգացմունքներ ու հասկացողություններ:

Մեր բոլոր ժողովուրդների լեզուների մեջ հաստատապես մուտք են գործել այնպիսի բառեր, ինչպիսիք են պարտիա, սովետ, սոցիալիզմ, կոմունիզմ, ստախանովյան, բոլշևիկ և հարյուրավոր այլ տերմիններ՝ հասարակական երևույթների, գիտություն ու տեխնիկայի, գրականության ու արվեստի բոլոր բնագավառներից:

Նոր տերմիններ մտցնելու ազբյուր հանդիսացավ, ինչպես գիտենք, նախ և առաջ մեր հայ ժողովրդի մայրենի լեզվի բառային կազմի հարըստությունը: Մեր կարծիքով այսուհետև ես տերմինաբանական աշխատանքում անհրաժեշտ է մայրենի լեզվի հարստությունն առավելագույն չափով օգտագործել, թե սկզբունքային և թե՛ զուտ գործնական տեսակետից: Եթե հայոց լեզվում կան այնպիսի բառեր, որոնք համահավասար, կամ համարժեք կերպով արտահայտում են այս կամ այն գիտական, հասարակական, տեխնիկական և այլ հասկացողությունները, ապա մեր կարծիքով ավելորդ է դուգահեռ տերմին մտցնել մի այլ լեզվից, դա հավանականորեն կարող է խառնաշփոթություն առաջացնել, աղճատել մայրենի լեզուն:

Սակայն չպետք է պահանջել, որ տերմիններ ստեղծվեն միայն մեր լեզվի միջոցներով, մեր բառարմատներից, բառային ֆոնդից: Դա կարող է միայն ֆնասել մեր լեզվին: Ես պնդում եմ, որ այս հարցում ընկ. ընկ. էդ. Սղայանը և Գ. Սևակը ճիշտ դիրքավորում չընդունեցին:

Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է համարձակ մտցնել այն տերմինները, որոնք ընդունված են առավել հարուստ, Սովետական Միության ժողովուրդների ազգամիջյան լեզու դարձած ռուսերենի մեջ:

Այս տեսակետից ես առարկում եմ այն ընկերներին, որոնք առաջարկում են պարտիա բառի փոխարեն գործածել կուսակցություն, ռեոլուցիա բառի դիմաց՝ հեղափոխություն, սովետական բառի դիմաց՝ խորհրդային և այլն:

Ես համամիտ եմ որոշ ընկերների այն կարծիքին, որ հեղափոխությունը բաժնի բաժնեատերի համար արտահայտում է այդ բաժնի էությունը, բայց եթե այդ կարծիքը լինելու այն ժամանակ, երբ օրինականացվում էր հիշյալ բաժնի զործածությունը, մի գուցե կարելի լիներ համաձայնվելու Բնաշխարհում, երբ արդեն պարտքի, ռեզերվի, սուբսիդիայի և այլ բաժնի կապում կերպով մտել են մեր ժողովրդի լեզվի մեջ և միանգամայն հարազատ են հնչում յուրաքանչյուր հայի համար, ինչպես նաև մյուս ժողովուրդների համար, արդյունից այդ բաժնի վերացման և հնի վերականգնման մասին, ճիշտ չի լինի Այսուհետև յուրաքանչյուր նոր բաժնի ընդունման դեպքում պետք է բազմակողմանի մոտենալ, հանգամանորեն հաշվի առնել բաժնի առանձնահատկությունը, պարզել, թե որքանով է նա համապատասխանում հայոց լեզվի օրինակաբանությանը:

Անկասկած պետք է ընդունել և պաշտպանել պրոֆեսոր Ասիանյանի այն առաջարկը, որ բաժնի զործակա, ինչպես արտասանվում են Այսինքն, պետք է փոփոխվի այն կամ այն զործածել, որպեսզի չգրենք և չարտասանենք ռեզերվի, կուլտուրայի, Ընկ. Սեփակը դանում է, որ պրոֆեսոր Ասիանյանը այդպիսի առաջարկություններ է մտցնում, որովհետև նա զո՞չ է մեր լեզվի ուղղագրությունից: Այո, ես կասեմ ոչ միայն պրոֆեսոր Ասիանյանը, այլ շատ շատերը գո՞չ չեն մատակներին կողմից ստեղծված այդ խառնաշփոթությունից, որ մտցված է հայոց լեզվի ուղղագրության և ուղղագրության մեջ և մինչև հիմա չենք կարողանում ազատազրկել դրանից:

Հեղվաչինարարության մասին խոսելիս պետք է անպայման ուշադրություն առնել հայոց լեզվի մաքրության հարցը, որը մեծ նշանակություն ունի մեր ժողովրդի կուլտուրական զարգացման համար:

Հասկանալի է, որ ժողովրդի գրական լեզուն, երբ կազմավորվում է ժողովրդական խոսակցական լեզվի ամբողջ հարստության հիման վրա, այն է ընկնում բացառիկ մատչելիության և ժողովրդի հոգևոր զարգացման վրա ներդրվում մեծ ուժով:

Մեզ մոտ գրական լեզուն կառուցվում է ոչ թե տարերայնորեն, ինչպես կառուցվել են գրական լեզուները սոցիալիստական ռեզերվային առաջ, այլ գիտական հիմքի վրա, ժողովրդական լեզուների ամբողջ հարստության մանրակրկիտ ուսումնասիրության, մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների հիման վրա, մեր պարտիայի լենինյան-ստալինյան ազգային-քաղաքականության հիման վրա:

Մեր պետությունը հոգ է տանում գրական լեզվի զարգացման նկատմամբ, այսինքնաբանների, գյուղացիների, ձեռնարկների, քերականության ձեռնարկների, տեղեկատուների և բառարանների ստեղծման ու հետագա կատարելագործման նկատմամբ, գիտություն, գրականության և արվեստի զարգացման, գրքերի, թերթերի ու ամսագրերի հրատարակման նկատմամբ: Բոլոր հնարավորությունները ստեղծված են լեզվի զարգացման, նրա հետագա էլ սովելի մշակման համար:

Սույն լեզվաբանների, գրողների, բանաստեղծների, պատասխանատուներից այս հարցում ավելի է բարձրանում, նրանք պետք է ամենայն սկզբունքայնությամբ պայքարեն մայրենի գրական լեզվի զարգացման համար: Մ. Գորկին գրել է՝ Վեդին է հիշեցնելու, որ լեզուն ստեղծողն է:

ծում է ժողովուրդը, լեզվի բաժանումը՝ դրական և ժողովրդական լեզուներին, նշանակում է միայն այն, որ մենք ունենք, այսպես ասած, «հում» և վարպետների կողմից մշակված լեզու։ Առաջինը, որ շատ լավ է հասկացել, այդ Պուշկինն էր, ինչը նա էլ առաջինը ցույց տվեց, թե ինչպես պետք է օգտագործել ժողովրդի խոսքային նյութը, ինչպես պետք է մշակել վերջինս¹։ Այդպես է վերվել նաև Հովհաննես Խումանյանը հայոց լեզվի հետ։ Նա մեծ վարպետություն ցույց է տվել, թե ինչպես պետք է օգտագործել ժողովրդի խոսքային լեզուն։ Դրանից ի միջի այլոց հետևում է, որ դրական ստեղծագործության մեջ չի կարելի մեքենայորեն վերարտադրել ամբողջ ժողովրդական ֆոնդը, որովհետև դրա անխուսափելի հետևանքը կլինի ժամանակակից լեզվի արհեստական գոհնկացումը։ Շնախառնությունը դրականության անվիճելի արժեքը, — գրում է Մ. Գորկին, — այն է, որ մեր կլասիկները խոսքային քառսից ընտրել են առավել ճշգրիտ բառեր, ծանրակշիռ խոսքեր և ստեղծել են այն «մեծ, հիսնալի լեզուն», որի հետագա զարգացմանը աղերսում էր ծառայել Տուրգենևը, Լեվ Տոլստոյը²։

Մեր կուլտուրական զարգացման ներկա էտապում ժողովրդի գերակընդհանուր մասը խոսում է դրական լեզվով։ Մեր գրողները, պոետները մեծ անելիքներ ունեն, նրանք չպետք է լեզուն արխայիկացնեն նրա մեջ մասսայաբար մտցնելով բարբառներ, զրարար բառեր։ Այս տեսակետից չեմ կարող չնշել ընկեր Սեվակի, հատկապես որպես լեզվաբանի նորաձևությունների մասին, որը նա մտցրել է «Եվդենի Օնեգինի» թարգմանության մեջ։ Այսպես, օրինակ սնաբեր, զրգահառաչ, երկառավոտ, նշտասպաս, պայազատ արկածներ, արփիաճեմ կիրք, սրդող խելք և այլն։ Ընկեր Սեվակը իր ելույթում ասաց, որ շատ թարգմանություններ հասկացվում են միայն այն դեպքում, երբ համեմատում ես բնագրի հետ — դրա լավագույն նմուշը հենց ընկեր Սեվակի «Եվդենի Օնեգինի» թարգմանությունն է, որը համեմատելիս շատ դեպքում հիասթափվում ես։ այնքան մեծ են աղավաղումները։ Մինչև անգամ ամենապատասխանատու տղերքը ընկ. Սեվակը աղավաղել է։ Այսպես օրինակ «не мысля гордый свет забавить» նա թարգմանել է «ոչ նյութ տալը սեգ աշխարհին» մինչդեռ Պուշկինի մոտ դա բարձրաշխարհիկ հասարակության մասին է, այլ ոչ թե առհասարակ աշխարհի մասին։ Դամ «с виду злых» թարգմանված է «գոթեմ» որը միտնդամայն աղավաղում է միտքը։ Ժորտատիրական հարաբերություններ տրտահայտող «Драконовый мальчик» բառերը թարգմանված են «բախում խաղացող տղան»։

Իմ կարծիքով ընկեր Սեվակը որպես լեզվաբան, պետք է ինքը պայքարի այդպիսի նորաձևությունների դեմ, եթե նկատում է դրականության մեջ, նա խոսքով քարոզում է այդպես, իսկ գործնականում աղավաղում։

Մենք, որպես մամուլի աշխատողներ, բազմաթիվ նամակներ ենք ստանում աշխատավորներից, ուսուցիչներից, աշակերտներից, որտեղ նրանք բողոքում են մի շարք տերմինների ոչ կայունություն, անորոշակիություն մասին։

Կարող եմ միայն մի օրինակ բերել։ Կիրովականի միջնակարգ դպրոցի աշակերտներից մեկը գրում է, թե Ա. Ղարիբյանի ուղղագրական բառարանում «բացադանչել» է գրված, թիսկ գրքերում և թերթերում ես

¹ Մ. Գորկին, Դրականության մասին, էջ 220։

² Նույն տեղում, էջ 146։

կարդում եմ Երազականչելը: Ես գրավոր աշխատանքում գրել եմ բացականչել, իսկ իմ ընկերս բացազանչել, ուսուցիչը իմ գրածը համարել է սխալ և գրավորիս գնահատականը իջեցրել է 4-ի... խնդրում եմ պատասխանել, ով է ճիշտը:

Այդպիսի բառեր մեզ մոտ յավոք սրտի շատ են, առանձնապես մասնատների կողմից ստեղծված խառնաշփոթությունից հետո:

Դրանց շարքին են պատկանում ներքոհիշյալ ե մի շարք այլ բառեր:

Հասարակարգ — հասարակակարգ
 Պարկ — պուրակ (պարտեզ)
 Դիֆերենցիալ — դիֆերենցիալ
 Շրջանացում — շրջանայնացում
 Կոնֆերանս — կոնֆերենցիա
 Էլեկտրակայան — էլեկտրոկայան
 Հետ — ետ
 Հետպատերազմյան — ետպատերազմյան
 Հետադարձ — ետադարձ
 Հետամնաց — ետամնաց
 Փրանսիական — ֆրանսական և այլն:

Կրկնաբաղաձայնների զործածության հարցում ես միանգամայն համամիտ եմ պրոֆեսոր Հափանցյանի հետ, որ առաջարկում է զործածել

Մասսա այլ ոչ թե մասա,
 Պասսիվ — պասիվ,
 Օգեսսա — Օդեսա և այլն:

Պարզ չէ նաև գլխատառերի զործածության հարցը, քննադատական պետք է գրել զործարանների անունները, օրինակ. Երևանի Մեքենաշինական գործարան, թե՛ Երևանի մեքենաշինական գործարան, Գործարանները թվարկելու դեպքում օրինակ. Մեքենաշինական, Կարբիդի, Կարի, թե՛ մեքենաշինական, կարբիդի, կարի: Նույնը պետք է ասել ինստիտուտների, հիմնարկների վերաբերյալ:

Ես կարծում եմ, որ արտահայտած կլինեմ մամուլի աշխատողների, թարգմանիչների, ոճարանների կարծիքը, եթե պահանջեմ մեր լեզվաբաններից, հանդամանորեն քննարկել այդ տերմինների հարցը և մի եզրակացություն գալ հենց ճերմինարանական կոմիտեում, որպեսզի միօրինակություն լինի մեր լեզվի մեջ:

Բոլոր դեպքերում հիմնական ուղադրությունը պետք է նվիրվի այնպիսի բառերի ընտրությանը և գրականության մեջ ամրապնդելուն, որոնք հնարավորություն են տալիս լեզուն հարստացնելու, դարձնելու ավելի կոնկրետ, մատչելի, ընդունակ՝ որքան կարելի է ավելի ճիշտ արտահայտելու մտքի գտնադան երևույթներ ու երանգներ:

Ես ցանկանում եմ մի գիտողություն անել պրոֆ. էդ. Աղայանին, որն իր ելույթի վերջին հինգ րոպեն նվիրեց պրոֆ. Հափանցյանին հանդիմանելուն: Նրա ասածից ստացվեց այն, որ կարծեք նա դեմ է ուսսերեն բառերի զործածությանը, ուսսերեն ցուցանակներ գրելուն, մինչև անգամ

իր զժգոհությունը հայտնեց, որ սյրոֆեոսը Ղափանցյանը ուսուցանել է ղեկուցելու նախ՝ այս վերջին հարցերը պիտի սխալում չենարկման առարկա չէին, քանի որ մեզ մոտ յուրաքանչյուրին թույլատրվում է և երաշխավորվում ուսուցանել խոսելը: Երկրորդ՝ եթե ըստ էության մասնաճյուղ, դա ոչ այլ ինչ է, եթե ոչ ազդեցիկ նեղ սահմանափակվածությամբ առաջադասություն, որը զժրախատարար մեր մի շարք լեզվաբանների մոտ ևս և որը հնարավորություն չի տալիս մարքսիստական մեկնաբանություն թյամբ բազմակողմանիորեն ուսումնասիրելու թեկուզ և նեղ մասնագիտական հարցերը: Իմ կարծիքով մեր մի շարք լեզվաբանների այդ սխալ տեսակետը արժանի է խիստ քննադատության: Դուրս է. Ազոյանը առհասարակ այդ կարծիքին չէ, եթե այդ ազդեցիկ է, լավ է. բայց նրա ելույթը այդպիսի տղամարդկանց թույլեց: Նրա ելույթը դեռ չէր ազատագրված մասիստական հայացքներ պարունակող մաքերից, որոնք նա պարտավոր է սուր քննադատության ենթարկելու:

Պետք է հուշար, որ ներկա սեսիայից հետո մեր լեզվաբանները պարտական աշխատողները, մամուլի, ժողովրդական կրթության, դրականության և արվեստի աշխատողները լեզվաբանության վերաբերյալ բնիկը Սաալինի հանձարեղ աշխատությունների լույսի տակ հուանդուն աշխատանք կկատարեն դարգացնելու մեր մայրենի լեզուն, համառոտ են կուսումնասիրեն ուսու մեծ ժողովրդի լեզուն:

ՆԵՎ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ

Արդի հայերենի կազմավորման հարցի մասին եզել են և այժմ էլ շարունակում են գոյություն ունենալ իրարամերժ կարծիքներ, որոնք կարելի է բաժանել երեք խմբի:

Ոմանք կարծում են, թե ժամանակակից հայոց լեզուն գրարարի անմիջական շարունակություն է, գրարարի զարգացման հետագա փուլը, թե գրարարը չբայցայից, չմահացավ, այլ զարգացավ և տվեց այժմյան հայոց լեզուն: Այս տեսակետը իմ կարծիքով սխալ է:

Հայտնի է, որ ժամանակակից հայոց լեզվի հենց թեկուզ քերականական կառուցվածքը խիստ տարբերվում է գրարարի քերականությունից, դրանք նույնիսկ իրարից տարբերվում են իրենց սխալմամբ, գրարարը հիմնականում թեքական, իսկ արդի գրական լեզուն կցական սխալմամբ ունի Ոչ ձևաբանությամբ (հարվում, լսնարհում), ոչ էլ շարահյուսությամբ (իսկ այս երկուսը, ինչպես ցույց է տվել բնիկը Սաալինը, կազմում են լեզվի քերականությունը) այդ երկու լեզուները ոչ թե չեն նույնանում, այլև խիստ տարբերվում են:

Երբեմն մասնագետաց են անում բառային կազմը կամ ավելի ճիշտ՝ բառային հիմնական ֆոնդը, թե անա, մեր բառերի մեծ մասը գրարարյան է: Ես կարծում եմ այստեղ էլ մեկ ուրիշ սխալ մտակցում կա: Գրարարյան որ բառերն են մեր այժմյան լեզվի մեջ պարծածվում. մեծ մասամբ այն բառերը, որոնք կան նաև մեր բարբառների մեջ, իհարկե, առաջին հերթին՝ Արարատյան բարբառում: Միանգամայն սխալ է, երբ հաց, ջուր, ծառ, գետ և հազարավոր նման բառեր անմիջապես բխեցնում են գրարարից, թեև դրանք նույնությամբ կան հենց Արարատյան բար-